

## ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՌՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՑ

ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԱՆԻ

1976

-0-0-0-

Նկատի ունենալով որ մեր պաշտօնավարութեան շրջանը Մոնթերէալի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Ծուխին մէջ շարունակեցինք մինչեւ 1976 տարւոյ նոյեմբեր ամսուն վերջը, յարմար կը դատենք յիշեալ տասնմէկ ամիսներուն տեղեկատուութիւնը գրի առնել ամփոփ եւ գլխաւոր գիծերով։

Ինչպէս անցեալին մեր եկեղեցական պաշտամունքները կատարուեցան կանոնաւորութեամբ եւ կարելի եղած վայելչութեամբ։ Իրենց թանկագին մասնակցութիւնը բերին քաղաքիս զոյզ քահանայ ճայրերը յայձին ՏՅԱՀԱԿ Աւագ քնչ։ Պալեան եւ ՏՅՈՒԽԻԿ քնչ յ. Նշանեան, ինչպէս նաև եկեղեցւոյս Սարկաւագներն ու Դպրաց Դասը գլխաւորութեամբ անխոնջ ղեկավար Պրօֆեղամ Շիրվանեանի։ Այս տարւոյ Ցուլիսի ԶԻԻ Վարդապառի տօնին ունեցանք սարկաւագական Ճեռնագորութիւն մը Ճեռամբ Գերշ. Արիս Եպս. Շիրվանեանի, որով եկեղեցւոյս սարկաւագներուն թիւը աւելցաւ յանձին Բարեշնորէ Ցարութիւն Սրկ. Սրմաքէշեանի։

Մեր Կիրակնօրեայ պաշտամունքներուն ընթացքին քրիստոնէական դաստիարակութեան մտահոգութեամբ, Ճանադիր եղանք Աստուծոյ Խօսքը անխաքանքարողել, քանի մեր պաշտոնին բերումով մեզի յանձնարարուած էական պարտականութեան գծով բացի կիրակնօրեայ պաշտամունքներէն մեր պատգամը տուինք զանազան առիթներով եւ միջոցներով, որինակ՝ ծիսակատարութեանց ընթացքին, եկեղեցին մէջ կամ դուրս, հանդիս, ընդունելութիւն կամ այլ պատեհութիւններով, նաեւ ԹՈՒՐԱՍՏԱՆԻ մէջ գրելով։

Համայնքիս գլխաւոր Ճեռնարկը պէտք է նկատել եկեղեցւոյ օժման 5րդ տարեղարձը զոր Սարտի 6-7 տօնախմբուեցաւ շանադրութեամբը կարգադիր յանձնախումբին որունց ատենապետն էր Պրօֆ. Ք-Պտուքեան։ Սոյն Հանդիսութեանց նախագահելու հրաւիրուեցաւ Արեւմտեան Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Վաչէ Արք. Ցովսէփեան որ մատոյց նաեւ գոհաքանական Ս. Պատարագ աւուր պատշաճ պատգամներով։

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ մեր գործունելութիւնը այս տարի եւս անցաւ շատ գոհացութիչ Հաղորդակցութեամբ։ Ութրըմոնի եկեղեցիներուն համար աւանդութիւն դարձած տարեկան միացեալ պաշտամունքը որ կը կոչուի Միութեան համար Աղօթքի Շաքաթ, այս տարի եւս կատարուեցաւ բազմաթիւ Համայնքներու եւ զանազան ազգերու մասնակցութեամբ, Սուրբ Գեորգ Ցոյն Օրթոսոքս եկեղեցւոյ մէջ, ուր մեր բաժինը բերինք յանուն մեր ժողովուրդին՝ մասնակցութեամբը մեր Դպրաց Դասի գեղահիւս շարականներու երգեցողութեամբ։ Ցիշեալ պաշտամունքի թուականն էր Զ1 Ցունուար 1976։ Սիչեկեղեցական բնոյթ կրող Հանգամանք մը կրեց յիշատակելի այցելութիւնը Մերձաւոր Արեւելքի Մելքիթներու Պատրիարքին Սաքսիմոս Հաքիմի, որուն ի պատիւ սարքուած մէծ ընդունելութեան հրաւիրուած ըլլալով ներկայացուցինք մեր համայնքի յարգանքը։ Ապա պատիւը ունեցանք նորին Ամենապատուութեան այցելութիւնը ընդունելու մեր եկեղեցւոյ մէջ ընկերակցութեամբ Հայր Ժորժ Բորիաթիի։

Առաջ. Փոխ. Արիս Սրբազնի կարգադրութեամբ եւ մասնակցութեամբ, Հոկտեմբեր 18-21 թորոնթոյ յի մէջ ներկայ գտնուեցանք Գանատական Եկեղեցեաց Համաժողովին, ուր կը մասնակցէին բազմաթիւ եկեղեցիներ եւ նկատի առնուեցան կրօնական, ազգային, պատմական, մշակոյթային եւ ընթացիկ հարցեր ներկայ պայմաններու ըմբռնողութեամբ։ Բնական է թէ սոյն պատեհութիւնը օգտագործեցինք առաւել չափով ծանօթացնելու մեր եկեղեցին իր անցեալով ու ներկայով։ Նոյեմբեր 21ին Սոնթերէալի հոչակաւոր նոթրը Տամ եկեղեցւոյ մէջ դարձեալ բազմազան եկեղեցիներու շարթին, Հայոց եկեղեցին ներկայացուցինք էկումենիք արարողութեան մը ընթացքին, որ նուիրուած էր Լատինաց Սուրբ Թագաւոր, Քրիստոսի տօնին։ Սոյն Հանդիսութիւնը կը նախագահէր Սորթերէալի Արքեպիսկոպոս Փօլ Կրէկուար ու բացի եկեղեցական բարձրաստիճան ներկայացուցիչներէ կային նաեւ քաղաքական կարեւոր դէմքեր որոնց շարթին քաղաքապետ ժան Տրափօ։

Մոնթրէալի էկումենիք Կեդրոնի Հետ եւս մեր կապը միշտ սերտ պահեցինք, ջանալով ժանօթացնել մեր եկեղեցական եւ համայնքային հարցերը իրենց արժէքներով ու պատմական ժառանգութեամբ, ինչպէս նաև եկեղեցական գետնի վրայ գործակցելով: Աւելորդ շենք սեպեր Հոս յիշել թէ մեր մեկնումին առթիւ Սանդրը Տէքիւմէնիզմ կեդրոնին մէջ պատշաճ ընդունելութեամբ եւ հիւրասիրութեամբ ողջերթ մաղթեցին մեզ, անգամ մը եւս յայտնաբերելով իրենց յարգանքը հանդէպ մեր համայնքին ու եկեղեցին:

ՆԱԲԱԹՈՐԵԱԾ ՎԱՐԺԱՐԱՆԻ մասին անցեալ տարուան մեր տեղեկատուութեան մէջ ակնարկութիւն չունեցանք նկատի ունենալով որ նոր քաջուած էր զպրոցը եւ 1976 տարւոյն կը պատկանէր գործունէութեան տեղեկագիրը: Նախորդ շըշանը սկսելու ժամանակ բաւական դժուարին աշխատանք տարինք ուսուցչութեան յայմարթենածուներ գտնելու համար, վասնզի շատերը զանազան պատճառներով կը դժկամակէին պաշտօն ստանձնելի: Ուրախ ենք որ կարողացանք ապահովել այժմու անձնակազմը, զոր ծխական նորութեան եւս հաստատելի վերջ այսօր կը շարունակէ իր երկրորդ տարեշրջանը անձնուէր ջանադրութեամբ: Սկզբնական շըշանին, 1975ին, քանից ունեցանք ուսուցչական ժողովներ կազմակերպելով նախնական անհրաժեշտ հարցեր, եւ յարմար դատուցինք տեսչութեան պատասխանատուութիւնը յանձնել Տիկին Արաքսի Ազնագուրի զոր բացառիկ եռանդով կը շարունակէ ցայսօր յօդուտ մեր նոր սերունդի հայապահանման: Մեր ժամանակի ներած չափով յաճախ այցելեցինք ու քաջալերեցինք ուսուցչական ծառայութիւնը ու զանազան առիթներով զատական ժամանական, ազգային-եկեղեցական տօներու թէ քարոյական նիւթերու շուրջ: Ուրախ ենք նաև որ անցեալ տարուան իր խոստումին համաձայն Տիկին Անահիտ էկրէնսէլ այս տարի պաշտօն ստանձնեց զօրացնելով ուսուցչական մարմինը իր փորձառութեամբ եւ ծառայութեամբ: Առաջնորդարանի մատուցած յոյժ գնահատելի օժանդակութիւնը եւս կարելի չէ անտեսել եւ պարծանքով պէտք է նշել ստեղծած արդիական մեթոդներն ու թիւրութիւնները ըլլայ դասագրքերու պատրաստութեամբ թէ տրուած ցուցմունքները կամ ուսուցանելու թելադրութիւնները: Անցեալ տարեշրջանին հրաւիրեցինք Օր. Սիլվա Տէր Ստեփանեան որ պատասխանատու վարիչն է Առաջնորդարանի Հայ լեզուի ուսուցման: Օր Սիլվայի բացատրական դասախոսութիւնները խիստ հետաքրքրական եւ օգտակար հանդիսացան թէ աշակերտութեան եւ թէ ուսուցչական կազմին ինչպէս նաև այն ծնողքներուն որոնք ընդունելով ժանուցուած հրաւիրը, ներկայ գտնուեցան:

Սաղկազարդի շաբաթէն սկսեալ այս տարի Ապրիլ ամսուն մէջ գերշ. Տ. Արիս Եպս, Շիրվանեանի Հետ փոխանակութիւն մը ունեցանք որով վեց շաբթօւան համար ստանձնեցինք Թորոնթոյի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ հովութիւնը, մինչ Արիս Եպս, կը գտնուէր Մոնթրէալ կամ այլուր:

Այս տարւոյ մեր գլխաւոր այցելուները եղան թեմիս բարեխնամ Առաջնորդ Տ. Թորգոմ Արք. Սանուկեան, Յունիս Զ7ին մեզ Մայրագոյն Վարդապետի աստիճան տալու առթիւ, նաև Հոկտեմբեր 80ին շրջանային ժողովի մը համար: Տ. Արիս Եպս. քանից այցելեց՝ գլխաւորաբար եկեղեցւոյ օծման տարեղարձին, մեզ փոխարինելով Զատիկին ու նահատակաց տօներուն, նաև ժողովներու պատճառով: Մայիսի ԶԶ-Զ7 հանոյքն ունեցանք Հիւրընկալելու այցելութիւնը Մուրբե է Հմիածնէն երկու հոգեւորականներ որոնք եկած էին թեմիս տարեկան Պատգամաւորական ժողովին առիթով, յանձնին Արք. Տ. ԱրամԱքահանայ Պոյանեան, որ եկեղեցւոյ մէջ Ս. Պատարագ մատոյց, իսկ Արք. Տ. Արտակ քահանայ Սիմոնեան, որ բանախօսութիւն մը տուաւ Սարտարապատի պատմական իմաստին ու խորհուրդին շուրջ, եկեղեցւոյ Մամիկոնեան Ցանձնախումբին հրաւիրով եւ խանդավար բազմութեան մը ներկայութեան:

Եգիպտոսի Առաջնորդական Փոխանորդ Արք. Տ. Սահակ Աւագ քահանայ Շաքարեան Սեպտեմբեր ամսուն Մոնթրէալ իր այցելութեան առիթով քանից եղաւ մեզ Հետ յատկապէս նաշշվերացի տօնին մասնակցելով եկեղեցական արարողութեանց: Դժբախտաբար Տէր Հայրը Եգիպտոս վերադառնալով իր Մահկանացուն կնքեց յառաջացեալ տարիքի բերումով:

Պատկարելի այցելուներու շարքին ուրախութեամբ ընդունեցանք  
Թուրքիոյ Հայոց Պատրիարք Ամենապատի Տնորհք Արք. Գալուստեանի այցելու-  
թիւնը Նոյեմբեր Զ-4 կարճ ժամանակի մը Համար։ Պատրիարք Սրբազնը իր  
շրջագայութեան ընթացքին, ներառեալ Սոնթրէալը, կուզէր Մնայուն նաստներ  
ապահովել օժանդակելու Համար Թուրքիոյ գաւառներէն գաղթող կարոտ Հայ  
ընտանիքներու Համար։ Սոնթրէալի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ  
Մխական Խորհուրդը խոստացաւ տարեկան Հազար տոլար հատկացնել այս յոյժ  
անհետաձգելի նպատակին։ Պատրիարք Սրբազնին իրը գաւառանակիր կընկերակ-  
ցէր Հոգը. Տ. Խաժակ Վրդ. Պարսամեան։

Սոյն տարւոյ ընթացքին ոչ-պաշտօնական այցելութիւնը ընդունե-  
ցանք Հետեւեալ Հոգեւորականներուն, Ֆիլատէլ Ֆիայէն Տ. Զաւէն Ս. Վրդ. Արզու  
մանեան, Սան Ֆրանսիսկոյէն Տ. Նարեկ Վրդ. Սարմազէւեան, և Պոստոնին Տէր  
Եղիշէ Ս. Վրդ. Կիջիրեան։

Բարեպաշտական գանազան Նուէրներու կարգին կարեւոր եւ մնայուն  
Հետեւեալ Նուէրները եղած են եկեղեցւոյ բարեզարդման եւ պայծառութեան  
Համար։ Եկեղեցւոյ մուտքին բանկալի ընդհանուր մասը գորգապատուած է Պր.  
Գրիգոր Տիգրանեանի եւ Պր. Գէորգ Գէօրհանեանի կողմէ։ Տէր եւ Տիկին Գրիգոր  
Տիգրանեանի կողմէ զոյգ մը ոսկեզօծ կանթեղներ եւ մեծ մոմակալ մը։  
Մեթերիսեան եւ Եազընեան ընտանիքներու կողմէ զանազան մեծ ու փոքր աշտա-  
նակներ։ Տ. Ծնորհք Ս. Վրդ. Գասպարեանի կողմէ Սուրբ Գրիգոր Լուսաւորչի  
Մեծաղիր իւղաներկ նկարը որուն օծումը կատարեց Առաջնորդ Տ. Թորգոմ Արք.  
Սանուէկեան, Նախապէս Նուիրուած Ս. Ստեփաննոսի նկարին Հետ միասին։ Նոյն  
Նուիրատուին կողմէ նաեւ երկու Սկիհ ու մաղմահ եւ խոշոր տապանակ մը  
Սուրբ Սիւոռնի պահպանման Համար։

Վերջացնելի առաջ մեր խօսքը, որ գուցե որոշ մոռացումներ  
կրնան եղած ըլլալ, Մոնթրէալի մէջ օրէ օր աճող մեր գաղութին կուզենք  
մաղթել որ գաղութային կազմութեան այս շրջանը ըլլայ զգուշաւոր եւ  
իրատես եւ Հեռատես ազգայիններու միասնական գործակցութեամբը, որպէսզի  
նոր կեանքի մաքարումներուն մէջ նորահաստատ Հայութիւնը որքան որ շատ բան  
կը կորսնցնէ, կարենայ որոշ եւ անշփոթ՝ պահպանել իր տոհմային անհատականու-  
թիւնը իբր ՀԱՅ եւ իբր ՔՐԻՍՏՈՆԵԱՑ, միջազգային Հաւաքականութեան ճանցընելով  
ուրոյն Համայնք մը Հայաստանեայց Եկեղեցիով ներկայացող, որ Լուսաւորչի  
օրերէն, Այրարատեան դաշտէն մինչեւ Հոս Հասած, դարերու աղջամուղջը ճեղքող  
լոյս ճառագայթներով լուսաւորուի նորաստեղծ այս գաղութին Հայացքը դէպի  
կեդրոնը իր ազգային լուսաւորութեան, դէպի Սուրբ Գահը Լուսաւորչին ուր  
կը բազմի Հայոց Ընդհանրական Հայրապետը, Սուրբ Էջմիածնէն Հսկելով աշխարհով  
մէկ ցրուած իր զաւակները։ Այսպիտակցութեամբ եւ ուղղութեամբ բազում  
աշխատանքներ ունի կատարելիք այս եկեղեցւոյ մէն մի անդամը, եւ յատկապէս  
ղեկավար տարրը։ Եւ մենք իբր Հոգեւոր Հովիւ աշխատեցանք այս մտահոգութեամբ  
ու ջանացինք այս առողջ գիտակցութիւնը միշտ վառ պահել մեր հօտին մէջ, իբր  
Նուիրական պարտքը մեր Հոգեւորականի։ Թող Աստուած օրհնէ բոլոր անոնց որ  
այս գիտակցութեամբ կը գործեն ու կը մնան եկեղեցւոյ կողքին փարած։